



«Հնարավորությունների հարստացում» ծրագրի
 «Քաղաքաշինության նախարարություն»

Empowered lives.
 Resilient nations.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ո 4

«Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00059937 ծրագրով
 նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին աջակցող
միջգերատեսչական մշտական գործող աշխատանքային խմբի

*ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ՝ Ա. Հակոբյանի գրասենյակում
 2012թ. հոկտեմբերի 12-ին կայացած նիստի*

Մասնակցում էին՝

Աշխատանքային խմբի անդամներ՝

- Ավագ Հակոբյան ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ, *աշխատանքային խմբի ղեկավար*
- Սամվել Սրայյան ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային ապահովման, բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ քաղաքականության վարչության բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների բաժնի պետ
- Օվսաննա Կարապետյան ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման գլխավոր մասնագետ
- Մարտիրոս Ծառուկյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի մթնոլորտային օդի քաղաքականության բաժնի պետ
- Հայկ Եսայան Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի իրականացման և մոնիտորինգի համակարգող
- Արսեն Կարապետյան «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի շինարարական նորմերի ու ստանդարտների գծով փորձագետ, *աշխատանքային խմբի քարտուղար*

Աշխատանքային խմբի անդամների փոխարինողներ՝

- Հայկ Բաղայան ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի զարգացման վարչության էներգախնայողության և տեխնիկական նորմատիվների բաժնի պետ
- Արա Զաքարյան Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգման բաժնի պետ

Հրավիրված մասնակիցներ՝

- Սևադա Հայրապետյան ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության պետական տեսչության պետ, ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչ
- Հասմիկ Պետրոսյան ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
- Երվանդ Ավագյան «Երևաննախագիծ» ՓԲԸ քաղաքաշինական ծրագրերի և կառուցապատման բաժնի ճարտարապետ
- Լուսինե Աբրահամյան «Երևաննախագիծ» ՓԲԸ ջերմամատակարարման և օդափոխության բաժնի ճարտարագետ

Մերգեյ Ավագյան	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ գլխավոր ինժեներ
Վաղինակ Բաղդասարյան	«Հայնախագիծ» ԲԲԸ ինժեներական ջերմամատակարարման և օդափոխության (N1) բաժնի վարիչ
Ալեքսանդր Վարդանյան	«Շինսերտիֆիկատ» ՄՊԸ-ի տնօրեն
Մերգեյ Արբահամյան	«ՀՀ էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ
Աստղինե Պատյան	«Էներգախնայողության այլանս» տարածաշրջանային համակարգող
Արամ Ջուլիակյան	Ծրագրի փորձագետ ինստիտուցիոնալ գծով
Սամվել Եղիզարյան	Ծրագրի փորձագետ իրավական գծով
Տիգրան Սեկոյան	Ծրագրի փորձագետ որակի ապահովման և վերահսկման գծով

Նիստի օրակարգը՝

Ծրագրի շրջանակներում մշակված քաղաքաշինության բնագավառում էներգաարդյունավետության ոլորտի կայացման և զարգացման համար անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին ուղղված միջոցառումների նախագծի ներկայացում-քննարկում:

Ելույթներ ունեցան՝

Ա.Հակոբյանը ողջունեց մասնակիցներին և շնորհակալության հայտնեց մասնակցության համար: Նա նշեց, որ ԱԽ-ի ընդլայնված նիստի ընթացքում քննարկվելու է «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ Ծրագրի շրջանակներում փորձագետների կողմից մշակված քաղաքաշինության բնագավառում էներգաարդյունավետության ոլորտի կայացման և զարգացման համար անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին ուղղված միջոցառումների նախագիծը, որը նախապես տրամադրվել էր աշխատանքային խմբի անդամներին, ինչպես նաև մասնագիտացված կազմակերպություններին ս.թ. օգոստոսին: Աշխատանքային խմբի կողմից սույն նախագիծը հավանության արժանանալու դեպքում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն Ծրագրի փորձագետների կողմից կմշակվի և շահագրգիռ կողմերին կներկայացվի նախատեսված բարեփոխումների իրականացումն ապահովող իրավական ակտերի նախագծերը: Նշեց, որ տրամադրված ժամանակը բավարար էր ծանոթանալու նախագծին և ձևավորելու համապատասխան կարծիք:

Այնուհետև խոսքը փոխանցեց Ա.Կարապետյանին:

Ա.Կարապետյանը համառոտ ներկայացրեց «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի առաջին բաղադրիչի՝ «Էներգաարդյունավետության սկզբունքների վրա հիմնված շինարարական նորմերի ու կանոնների և ստանդարտների մշակում և կիրարկում» կատարման ընթացքը: Մասնավորապես, ներկայացրեց 2010-2012թթ. ընթացքում Ծրագրի կողմից նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքները, ինչպես նաև առաջիկա անելիքները: Նշեց նաև, որ Ծրագիրը դիտարկում է Շենքերի էներգաարդյունավետության մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010թ. մայիսի 19-ի թիվ 2010/30/ԵՄ հրահանգի ներդաշնակեցման աշխատանքներին աջակցության տրամադրումը:

Այնուհետև խոսքը փոխանցվեց Ա.Ջուլիակյանին:

Ա.Ջուլիակյանը մանրամասն ներկայացրեց քաղաքաշինության բնագավառում էներգաարդյունավետության ոլորտի կայացման և զարգացման համար առաջարկվող իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխմանն ուղղված միջոցառումների նախագիծը՝ ըստ համապատասխան մասերի:

Առաջադրանքի շրջանակներում փորձագետների կողմից մշակվել և ներկայացվել են առաջարկություններ քաղաքաշինության բնագավառի էներգաարդյունավետությանն առնչվող նորմատիվ-իրավական մի շարք փաստաթղթերում, մասնավորապես «Քաղաքաշինության

մասին», «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքներում, ՀՀ կառավարության որոշումներում և այլն:

Տրվել են նաև առաջարկներ ինստիտուցիոնալ դաշտի բարելավման ուղղությամբ:

Կայացավ մտքերի փոխանակում ներկայացված միջոցառումների նախագծի վերաբերյալ:

Ս.Հայրապետյանն առաջարկեց էներգաարդյունավետության ցուցանիշը ընդգրկել կառուցապատման (շենքերի կառուցման) մրցույթային հայտերի գնահատման ընթացակարգերում:

Հ.Քաղայանը, կարևորելով քննարկվող հարցերի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշումը, նշեց այդ մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտների պարտավորությունները նվազեցնելը՝ ներդրումները խրախուսելու նպատակով: Նա շեշտեց, որ այդ դեպքում մեծանում է ներդրումների՝ ցածրորակ լինելու վտանգը և ավելացրեց, որ սուբյեկտի՝ նորմերին հետևելը պետք է ստուգվի պետական համապատասխան մարմնի (ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության պետական տեսչության) կողմից շինարարության վաղ փուլում:

Օ.Կարապետյանը նշեց, որ ըստ ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 16-րդ հոդվածի «քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար»: Նա անդրադարձավ շենքերի և շինությունների, շինարարական նյութերի և արտադրանքների անվտանգության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի նախագծին, որն արտացոլում է և՛ պիտակավորման, և՛ համապատասխանության խնդիրները, և որի՝ էներգախնայողության վերաբերյալ դրույթները լրացվել են էներգաարդյունավետության վերաբերյալ դրույթներով:

Ս.Եղիզարյանը նշեց, որ ոլորտում ստեղծվող իրավական համակարգը պետք է համապատասխանի ՀՀ Սահմանադրությանը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին: Քանի որ իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով, իսկ իրավական այլ ակտերով սահմանվող նորմերը չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ, շինարարական նորմերը պարտադիր դարձնել հնարավոր է միայն այն դեպքում, երբ գոյություն ունի օրենքով սահմանված էներգաարդյունավետության վերաբերյալ նորմատիվ պահանջ: Շինարարական ջերմաֆիզիկայի նորմերը չպահպանած սուբյեկտին պատասխանատվության կանչելը բարդ է, քանի որ դատարանի տեսանկյունից պարտադրելու բավարար իրավական հիմքեր չկան: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի վերաբերյալ նա նշեց, որ նորմերի համար հիմք են այն պարտավորությունները, որոնք սահմանված են օրենքով: Նորմի իրավական ուժը կարող է բողոքարկվել, քանի որ օրենքը համակարգում է հասարակական հարաբերությունները, իսկ էներգախնայողության մասով պարտավորությունները «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով պարտադիր չեն: Այդ պատճառով առաջարկվել է նոր գլուխ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում:

Վ.Քաղասարյանը նշեց «Հայնախագիծ» ԲԲԸ կողմից գրավոր հայտնած՝ դրական կարծիքի վերաբերյալ և հայտնեց իր դիրքորոշումը, ըստ որի պետք է պահպանվի նորմերի՝ նախագծողի համար անխուսափելիորեն հետևելու անհրաժեշտությունը:

Ս.Ավագյանը պարզաբանեց, որ նորմատիվների դրույթները կարող են լինել պարտադիր, երաշխավորող և խորհրդատվական, ընդ որում վերջին երկուսը՝ կատարողի հայեցողությամբ և հնարավորությամբ: Անդրադառնալով մասնակիցների կողմից բարձրացրած՝ փորձաքննության խնդիրներին, նա հայտնեց իր դիրքորոշումը, որ փորձաքննությունը մասնագիտացում է մասնագիտության մեջ և պետք է առանձնացվի նախագծումից, ընդ որում փորձագիտական կազմակերպությունները չպետք է զբաղվեն նախագծումով ի տարբերություն անհատ փորձագետների: Այդ մասին առաջարկությունները ներառված են ներկայացրած փաթեթում:

Ս.Աբրահամյանը հայտնեց իր՝ դրական կարծիքը ներկայացրած փաթեթի վերաբերյալ, միաժամանակ նշելով եվրոպական երկրների փորձը՝ կամավոր մոտեցումից մեկնարկելու: Նա անդրադարձավ նաև հետ-խորհրդային երկրների (օրինակ՝ Բելառուս) և եվրոպական երկրների նորմերի միջև տարբերություններին:

Հ.Նսայանը նշեց, որ առաջադրանքի շրջանակներում կատարվել է զգալի աշխատանք և միջոցառումների նախագիծը ընդհանուր առմամբ ընդունելի է:

Ա.Կարապետյանը ներկայացրեց 35 նորակառույց բազմաբնակարան շենքերում պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման դիմադրությունների գնահատման արդյունքները (3 շենքեր կամ ընդհանուրի մոտ 10 տոկոսն են ապահովում նորմերի պահանջները) և նշեց, որ դա կարող է ծառայել որպես լուրջ փաստարկ ի պաշտպանություն նախագծի, հատկապես ինստիտուցիոնալ միջոցառումների, առաջնության համար:

Ա.Պատյանը առաջարկեց գնահատել տնտեսական օգուտները՝ կապված շենքերի էներգաարդյունավետության բարձրացման հետ: Այդ գնահատականները կօգնեն նախագծի քննարկումներին, հատկապես ՀՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարություններում: Ինչ վերաբերում է «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին, ապա այն ինչ որ ընդունվել է օրենսդրի կողմից լավագույնը չէ և չի համապատասխանում սկզբնական տարբերակին: Ներկա պայմաններում, երբ ՀՀ ունի զգալի արտաքին պարտք ՀՀ պետական բյուջեն չունի հնարավորություններ խթանելու էներգախնայողությունը, որը ավելի կնպաստեր օրենքի կիրարկմանը: Այնուամենայնիվ, վերը նշված օրենքը ունեցել է դրական արդյունքներ, մասնավորապես Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի ստեղծումը և գործունեությունը:

Ա.Մրապյանը նշեց, որ միջոցառումների նախագծի հեղինակները ցուցաբերել են մաքսիմալ մոտեցում, որը ընդունելի է նախաձեռնությունը առաջ տանելու առումով: Միաժամանակ անհրաժեշտ է լրամշակել նախագիծը, դարձնել ավելի իրատեսական, ներառելով իրավական ակտերի ընդունման ժամանակացույց և ներկայացնել իրավական ակտերի նախագծերը բոլոր շահագրգիռ կողմերին՝ կարծիքի: Անհրաժեշտ է նաև նախագիծը քննարկել ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ տկն. Ռ.Ալավերդյանի, ինչպես նաև նախարարության այլ ստորաբաժանումների հետ: Լրամշակված նախագծի հետ մեկտեղ պետք է ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ, հատկապես կանխատեսվող օգուտների գնահատման մասով, որը կարևոր կլինի ՀՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարություններում քննարկումների ընթացքում:

Որոշվեց՝

Առաջարկել Ծրագրին մշակել քաղաքաշինության բնագավառում էներգաարդյունավետության ոլորտի կայացման և զարգացման համար անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին ուղղված իրավական ակտերի նախագծեր՝ դրանք ՀՀ քաղաքաշինության և էներգետիկայի նախարարություններին և այլ շահագրգիռ մարմիններին քննարկման ներկայացնելու համար:

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ա. Հակոբյան

Աշխատանքային խմբի քարտուղար՝

Ա. Կարապետյան